Արձանագրություն N 2

ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-(17/1Ա) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար մարդատար մեքենայի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 10 նոյեմբերի 2017 թ.
ժամը 10:30

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ. Պետրոսյանը, անդամներ՝ Մ. Հակոբյանը, Զ. Թամազյանը, քարտուղար՝ Վ. Նավասարդյանը և «Մեգնա» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ Արման Թադևոսյանը:

Օրակարգ

ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-(17/1Ա) ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-(17/1Ա) ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Վ. Պետրոսյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

- հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը		Նախահաշվային գին ՀՀ դրամ
	«Մեգնա» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Տիգրանյան 1, փակ 1		
	Գնային առաջարկը/ՀՀ դրամ		
	/առանց ԱԱՀ/	ԱԱՀ-ն նեռարյալ	
1	6 958 333	8 350 000	8 500 000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան.
- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան.

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«Մեգնա» ՍՊԸ**-ին՝

  - ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 1-ին չափաբաժնի մասով:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ, ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացնել ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-(17/1Ա) ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ՀՀ ք.Երևան, Արշակունյաց 23 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Վ. Պետրոսյան

անդամներ _____ Մ. Հակոբյան

_____ Զ. Թամազյան

քարտուղար _____ Վ. Նավասարդյան